

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ.....	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА	33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.).....	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՄԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ).....	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
 ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԿՏՈՒԹՅՈՒՆ
 ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ.	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019
 Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 191
 Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ
 Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH
 Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 200
 Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ
 Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՄ
 ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ 206
 Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА
 Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ
 УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ 214
 Левон Овсебян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ
 Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՄ
 РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: 222
 ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ 224
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 226
 INFORMATION ABOUT THE AUTHORS 228
 Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 230
 NOTICE FOR THE AUTHORS

Արգիշտի Վարդանյան

ՄԱՍԻԿՈՆՅԱՆ ՏՈՂԱԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Բանալի բառեր. Տրդատ Գ, Արտավազդ Մամիկոնյան, Մովսես Խորենացի, Խոսրով Կոտակ, Վաչե Մամիկոնյան, Փավստոս Բուզանդ, Սանեսան, ապստամբություն, պարսիկներ:

Վաղ միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմության մեջ, հատկապես 301 թ. քրիստոնեության ընդունումից հետո, խոշոր դեր է ունեցել Մամիկոնյան իշխանական ընտանիքը: Նրանցից Տրդատ Գ-ի օրոք (298-330 թթ.) իրենց գործունեությամբ աչքի էին ընկնում Արտավազդ Մամիկոնյանը, իսկ Տիրան Արշակունու գահակալության շրջանում (330-359 թթ.) նրա որդի Վաչեն: Արտավազդ Մամիկոնյանի անձն ուսումնասիրողների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Մինչ այժմ էլ հետազոտողների մի մասը կարծում է, որ Արտավազդը Մանդակունյաց տոհմից էր, սակայն նախորդ դարում կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նա Մամիկոնյան էր և Տրդատ Գ-ի օրերում զբաղեցնում էր սպարապետի պաշտոնը: Այդ շփոթումները ծագել է Մովսես Խորենացու տեղեկություններից: Նրա աշխատության մեջ, տարբեր պատմական իրադարձություններում, մի քանի անգամ հիշատակվում է Արտավազդը, սակայն որպես Մանդակունյաց տոհմի ներկայացուցիչ¹: Ինչպես այդ մասին դիպուկ գրում է նշանավոր հայագետ Ն. Ադոնցը. «Խորենացու մեջ աչքի է զարկում նրա թշնամական դիրքը Մամիկոնյանների հանդեպ²: Շատ Մամիկոնյաններ, և ոչ հասարակ, մնացել են անհիշատակ, ինչպես Արտավան, Արտավազդ և Վաչե սպարապետներ Տրդատի ժամանակ: Արտավանի տեղ երևան է գալիս Արտավազդ Մանդակունի, Վաչեի տեղ՝ Բագարատ Բագրատունի»³: Մյուս պատմիչները, մասնավորապես Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդն իրենց հաղորդումներով լույս են սփռում խնդրո առարկա հարցի վրա և Արտավազդին⁴ համարում են Մամիկոնյան: Ագաթանգեղոսը խոսելով Գրիգոր Լուսավորչի որդիներին արքունիք հրավիրելու մասին, նշում է, որ նրանց բերելու գնացին. «Արտավազդ, որ սպարապետն էր ամենայն զօրացն Հայոց Մեծաց»⁵: Ինչպես տեսանք այստեղ չի հիշատակվում Արտավազդի ազգանունը: Սակայն Ագաթանգեղոսի «Պատմության» հունական խմբագրությունում հիշատակվում է հայոց սպարապետի ազգանունը: Արքունիք հրավիրված նախարարների թվում հունական խմբագրությունում նշված է «Հինգերորդ Մամիկոնյան նախարարը՝ սպարապետը, որին էին ենթարկվում Հայոց ամբողջ հեծելազորն ու հետևակը»⁶: Նույն տեղում խոսելով քահանայապետ Գրիգորին Կեսարիա ուղեկցելու մասին, պատմիչը նշում է. «Մամիկոնեից նախարարը, ամբողջ Հայաստանի սպարապետը»⁷: XX դ. սկզբներին

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2019 թ., գրախոսվել է 29.11.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, (այսուհետև՝ Մովսես Խորենացի), Ե., 1991, էջ 215, 217, 224, 231:

² Ադոնց Ն., Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հ. Հովհաննիսյանը, Էջմիածին, 2005, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 19:

⁴ Ուսումնասիրողներից Հ. Ասատուրյանը կարծում է, որ Արտավազդ Մամիկոնյանը և Հայոց թագավոր Արտավազդ Արշակունին (252/3-261թթ.) նույն անձնավորություններին են, սակայն ոչ թագավոր, այլ գործակալ, կամ հրամանատար (տե՛ս Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190 էն ն. Ք. մինչեւ 428յ. Ք., Վենետիկ, 1912, էջ 245: Սակայն Ս. Երեմյանը ցույց է տվել, որ Արտավազդը հայ Արշակունի սեպուհներից էր (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ (252/3-261), «Լրաբեր հասարակական գիտությունների», (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1975, N 1, էջ 15: Արտավազդի կառավարման տարիների վերաբերյալ ևս ուսումնասիրողները միակարծիք չեն և հայտնել են տարբեր տեսակետներ (տե՛ս Մարտիրոսյան Ա., Հայաստանը և առաջին Սասանյանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, N 3, էջ 152, ծան. 15):

⁵ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, (այսուհետև՝ Ագաթանգեղոս), Ե., 1983, էջ 478:

⁶ «Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», թարգմանություն հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. առաջին, Ե., 2002, էջ 172:

⁷ Նույն տեղում, էջ 174: Հայագետ Ժ. Գարիտի կողմից հրատարակված Ագաթանգեղոսի Պատմության մեկ այլ բնագիր հանդիսացող թարգմանությունում Կեսարիա կաթողիկոսին ուղեկցողների խմբում նշվում է. «Արտա-

Ն. Մառի կողմից հրապարակված Ագաթանգեղոսի աշխատության արաբական խմբագրությունում վերոգրյալի հետ նշվում է. «Եվ ամենայն զօրաց հրամանատարությունը գտնվում էր Արտավազդի՝ Մամիկոնյան իշխանի և սպարապետի ձեռքում»¹: Ավելի որոշակի հնարավոր չէր անձանագրել այդ փաստը: Ագաթանգեղոսի աշխատության արաբական նոր խմբագրությունում ևս նշվում է Մամիկոնյան սպարապետի անունը՝ «Արտավազդ»², կամ «առաջինը Արտավազդ (Արթուաքսադ)»³ :

Հաջորդ տեղեկությունն Արտավազդ Մամիկոնյանի մասին հանդիպում ենք Փավստոս Բուզանդի աշխատանքում: Խոսքով Կոտակը Հայաստանում տեղի ունեցող միջֆեոդալական սուր պայքարի պատճառով հրաման է արձակում բնաջնջելու Մանավազյան և Որդունի նախարարական տներին և նրանց դեմ ուղղարկեց. «զՎաչէ որդի Արտավազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց...»⁴: Հաջորդ դեպքում, Սանեսանի արշավանքի կապակցությամբ, պատմիչը նշում է. «Վաչէ որդի Արտավազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրավար ամենայն Հայոց մեծաց»⁵: Քննության ենթարկելով Արտավազդ Մամիկոնյանի սպարապետության հարցը, Մ. Թումանեանը, նշում է, որ Արտավազդի որդու՝ Վաչեի մասին պատմիչի վերը նշված հաղորդումները խոսում են այն մասին, որ ոչ միայն Արտավազդը, այլև նրա նախնիները ունեին նույն պաշտոնը⁶, այն է՝ սպարապետությունը: Տրդատ Գ-ի օրոք Արտավազդ Մամիկոնյան սպարապետի մասին տեղեկություններ կան նաև Մեսրոպ Երեցի աշխատանքում, որտեղ Մանվել Մամիկոնյանը նշում է. «Նախնիքն մեր Մամիկոնեանք Վահան և Վաչէ և Արտավազդ յաւուրսն Տրդատայ և Խոսրովու և Տիրանայ և հայրն իմ Վասակ յաւուրսն Արշակայ»⁷: Ինչպես տեսանք, դեպքերին ժամանակագրորեն ավելի մոտ գտնվող թե՛ Ագաթանգեղոսի, թե՛ Փավստոս Բուզանդի մոտ հստակորեն նշվում է, որ Տրդատ Գ-ի ժամանակ հայոց սպարապետը ոչ թե Արտավազդ Մանուկունին էր, այլ համանուն Մամիկոնյանը: Այդ հարցի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների ուշադրությունը հարցի վրա սևեռվեց XX դ. սկզբին, երբ մի շարք հետազոտողներ հանդես եկան Մովսես Խորենացու աշխատության տարբեր մասերի ուսումնասիրությամբ: Հ. Համբարյանն Արտավազդ Մամիկոնյանի վերաբերյալ հանդես եկավ առանձին աշխատանքով, որտեղ սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա եզրակացրեց, որ Ագաթանգեղոսի Արտավազդը (Մամիկոնյան) և Խորենացու Արտավազդը (կեղծ Մանուկունի) միևնույն անձնավորությունն էր⁸: Թեմային անդրադարձած Մ. Թումանեանը⁹, Կ. Տեր-Սահակյանը¹⁰, Ն. Ադոնցը¹¹, Մ. Աբեղյանը¹² Մովսես Խորենացու հիշատակած Արտավազդին համարում են Մամիկոնյան ու Տրդատի Գ-ի ժամանակակիցը և նրա սպարապետը: Հետագա տասնամյակներում հարցին անդրադարձած հեղինակները կա՛մ փորձել են չմանրամասնել, կա՛մ տուրք տալով նախորդ տարիներին կարծրացած

վազդը՝ Մամիկոնյանների տերը և սպարապետը»: Տե՛ս Garitte G., Documents pour l'etude du Livre d'Agathange, Citta del Vaticano, MCMXLVI, p. 83.

¹ Март Н., Крещение армян, грузии, абхазов и аланов святым Григорием арабская версия, С. Петербург, 1905, с. 123.

² Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Ե., 1968, էջ 58:

³ Նույն տեղում, էջ 96:

⁴ «Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց», բնագիրը Զ. Պատկանյանի, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Ե., 1987, էջ 18:

⁵ Նույն տեղում, էջ 28:

⁶ Տե՛ս Թումանեան Մ., Մի քանի նկատողութիւն Մամիկոնեանց զաղթականութեան մասին, «Հանդէս Ամսօրեայ», 1911, թիւ 9, էջ 520-521:

⁷ Մեսրոպ Երեց, Պատմութիւն վարուց եւ մակեան երանելի առն Աստուծոյ սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, 1737, էջ 217-218:

⁸ Տե՛ս Համբարեան Հ., Խորենացույ կեղծիք մըն ալ՝ Արտավազդ Մանուկունի՞ թէ Մամիկոնեան, «Հանդէս Ամսօրեայ», 1910, թիւ 1, էջ 18:

⁹ Տե՛ս Թումանեան Մ., նշվ. աշխ., էջ 520-521:

¹⁰ Տե՛ս Տեր-Սահակեան Կ., Վաղարշ Ե. Պարթեւաց թագաւորը նախահայր Մամիկոնեանց, «Բազմավէպ», 1906, թիւ 9, էջ 394:

¹¹ Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 18-19:

¹² Տե՛ս Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 118:

տեսակետին՝ Արտավազդին համարել են Մանդակունի¹: Հարցի ուսումնասիրության համար շրջադարձային էր Գ Աբգարյանի ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը սկզբնաղբյուրների համադրության հիման վրա ցույց տվեց, որ Արտավազդը ոչ թե Մանդակունի էր, այլ Մամիկոնյան²: Վերջին ուսումնասիրողներից Ա. Քեշիշյանը, անդրադառնալով Մամիկոնյանների ծագմանը, Արտավազդին ոչ միայն Մանդակունի չի համարում, այլ իրավացիորեն գրում է. «Արտավազդ Մամիկոնյանը Տրդատ Մեծի մանուկ ժամանակ Հայաստանի խնամակալն էր և այնքան մեծ հեղինակություն ուներ, որ օտար աղբյուրները նրան թագավոր էին անվանում»³:

Այսպիսով՝ սկզբնաղբյուրների գերակշիռ մասը, ի հակադրություն Պատմահոր, որը «մոռացության էր տալիս» Մամիկոնյանների վաստակները⁴, տեղեկացնում է, որ Տրդատ Գ-ի թե՛ մանուկ հասակում, երբ նրան տեղափոխեցին հռոմեացիների մոտ, թե՛ նրա գահակալման շրջանում, Արտավազդ Մամիկոնյանը մեծ դեր է ունեցել Մեծ Հայքի քաղաքական կյանքում: Իսկ Մովսես Խորենացու աշխատության Արտավազդ Մամիկոնյանը Մանդակունի է դարձել, հավանաբար, երկու պատճառով: Առաջինը, որը քիչ հավանական է, Պատմահոր աշխատանքում Մանդակունին հետագա դարերում արտագրողների և գրիչների կողմից կատարված ընդմիջակություն է: Երկրորդ, հավանական է, որ Մովսես Խորենացին, կատարելով իր մեկենաս՝ Սահակ Բագրատունու պատվերը, փորձել է նսեմացնել Մամիկոնյանների դերը վաղմիջնադարյան Հայաստանի քաղաքական կյանքում և Արշակունիների թագավորությունում, ինչը կարմիր թելի պես անցնում է նրա ողջ աշխատությունում: Այդ առումով Ն. Ադոնցը նշում է. «Արտավանի տեղ երևան է գալիս Արտավազդ Մանդակունի, Վաչէի տեղ՝ Բագրատ Բագրատունի: ... Վասակ գիջել է իր տեղը երկու ուրիշ սպարապետների, Վահան Ամատունի և Վաղինակ Սյունի: Մուշեղը չէ Պապ թագավորի սպարապետը, այլ Սմբատ Բագրատունին, որին և վիճակվում է Ձիրավի կռվի հաղթության փառքը: Փավստոսի վերջին հերոսը՝ Մանուել Մամիկոնյան անհետացել է և նրա տեղը գրավել է Սմբատ Բագրատունի»⁵:

Արտավազդ Մամիկոնյանն իր գործունեությունը ծավալել է Հայաստանի և Արևելքի երկրների համար բախտորոշ ժամանակահատվածում: Եթե մինչ III դ. սկզբները հռոմապարթևական պայքարում հիմնական թելադրող կողմը կայսրությունն էր, ապա 227 թ. հետո, երբ տապալվեց պարթևական հարստությունը, իշխանության եկած Սասանյանները, հատկապես Շապուհ Ա-ի (241-272թթ.) կառավարման ժամանակահատվածում, հարձակողական գործողությունների անցան: Սասանյանները չէին կարող հանդուրժել իրենց թշնամի Արշակունիների գոյությունը հարևան Մեծ Հայքում, և Հռոմին սուկալի պարտության մատնած⁶ Շապուհ Ա-ի զորաբանակները գրավում են տարածաշրջանի երկրների մեծ մասը, այդ թվում՝ Մեծ Հայքը⁷: Մովսես Խորենացին հաղորդում է, որ պարսիկների կողմից կազմակերպված Հայոց թագավոր Խոսրով Բ-ի սպանությունից հետո. «Յորմէ գաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգան Արշականեաց ի Յոյնս ապաւինէին, յուրոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ի դուռն կայսեր հասուցանէր»⁸: Հիշյալ դեպքերի վերաբերյալ հաղորդում ունի նաև Ագաթանգեղոսը. «Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ

¹ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանի հռոմեական մասի բռնակցումը Սասանյանների կողմից, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1984, էջ 48 և ուրիշներ:

² Տե՛ս Աբգարյան Գ., Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագիտության մեջ (Բուզանդարանի կորած դպրությունների կապակցությամբ), Բանբեր Մատենադարանի, 1964, № 7, էջ 247-249:

³ Քեշիշյան Ա., Մամիկոնյանների ծագման ավանդությունը և պատմական իրականությունը, «Հայոց պատմության հարցեր», հ. 1, Ե., 1997, էջ 20:

⁴ Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 21:

⁵ Նույն տեղում, էջ 19:

⁶ 260 թ. Եդեսիա և Խառան քաղաքների միջև տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական բանակը սուկալի պարտություն կրեց, իսկ կայսր Վալերիանոսը գերի ընկավ: Պարսկական զենքի այս աննախադեպ հաջողությունը պատկերված է Շապուհ Ա-ի թողած արձանագրությունում, որը հայտնաբերվել է «Նախշ-ի-Ռուստեմի» Քաաբա ի Ջարդուշտ զրադաշտական տաճարի վրա (տե՛ս Honigsmann E., Maricq A., Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, p. 12. Луконин В., Древний и раннесредневековый Иран, М., 1987, с. 57. Հայկական սկզբնաղբյուրներում ևս տեղեկություն է պահպանվել Եդեսիայի ճակատամարտի մասին: Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 58:

⁷ Տե՛ս Еремян С., Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, «Вестник древней истории», 1967, № 4, с. 47, 57.

⁸ Մովսես Խորենացի, էջ 215: Հայոց թագավորի սպանության և արքայազն Տրդատի հռոմեացիների մոտ ապաստանելու մասին տե՛ս Կարտլիս Լխովրեբա, Թբիլիսի, 2008, էջ 39:

անտի որդուցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ անշալ դաշեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց»¹ : Հայոց թագավորութիւնը և Արշակունյաց հարստութիւնը փրկած Արտավազդին, հետագայում գահ բարձրացած Տրդատը, որպէս հատուցում շնորհում է. «զսպարապետութիւն զօրացն Հայոց»²:

Այսպիսով՝ սկզբնաղբյուրների քննութիւնը և ուսումնասիրողների տեսակետները ցույց են տալիս, որ III դ. երկրորդ կեսի և IV դ. սկզբին իր գործունեութեամբ աչքի ընկած Արտավազդը Մամիկոնյան էր և այդ տոհմի առաջին սպարապետն էր ու այդ պաշտոնը հաջորդաբար զբաղեցնող Վաչե Մամիկոնյանի հայրը: Խոսելով վերջինիս մասին՝ Փավստոս Բուզանդը նշում է, որ Վաչեն Արտավազդի որդին էր և հայոց սպարապետութեան տոհմից էր³: Պատմիչի հաղորդումը ցույց է տալիս, որ Վաչեից առաջ նրա հայր Արտավազդը եղել է սպարապետ: Իսկ եթէ Վաչեն լինէր առաջին Մամիկոնյան սպարապետը, ապա Փավստոս Բուզանդը չէր նշի, որ Վաչեն սպարապետութեան տոհմից էր, այլ կհիշատակէր որպէս սպարապետ:

Ըստ Պատմահոր Արտավազդ սպարապետը գոհվել էր հյուսիսային ցեղերի դեմ մղվող ճակատամարտում⁴, որն ավարտվել էր հայկական բանակի հաղթանակով: Նրան սպարապետութեան պաշտոնում հաջորդում է որդին՝ Վաչեն, որին հայկական բանակի ղեկավարումը բաժին է ընկնում աշխարհաքաղաքական բարդ պայմաններում: Տրդատ Գ-ին հաջորդած Խոսրով Կոտակի (330-338 թթ.) կառավարման սկզբում դեռևս պահպանվում էր 298 թ. կնքված Մծբինի պայմանագրից բխող խաղաղութիւնը: Սակայն կամաց-կամաց Արևելքում ուրվագծվում էր նոր պարսկա-հռոմեական պատերազմի հեռանկարը, քանի որ Շապուհ Բ-ի (309-379 թթ.) կառավարման սկզբնական շրջանում Պարսկաստանը մեծապէս հզորացել էր ու փորձում էր հետ նվաճել Մծբինի դաշնագրով կորցրածը:

Խոսրով Կոտակի կառավարման հենց սկզբնական շրջանում երկրի ներսում սկիզբ է առնում նախարարական տարբեր խմբակցութիւնների պայքարն իրենց հողերի ու քաղաքական իշխանութեան ամրապնդման համար⁵: Ավատատիրական հասարակարգի անբաժան այդ երևույթը սկսել էր սպառնալից բնույթ կրել, և նախարարների միջև պայքարը Խոսրովի կառավարման շրջանում վեարածվեց բացարձակ ապստամբութեան, ինչը Հ. Մանանդյանի կարծիքով Խոսրով Գ-ի հեղինակութեան և Արշակունյաց թագավորական իշխանութեան թուլութեան նշան էր⁶: Դրա վառ ապացույցն է Փավստոս Բուզանդի հաղորդումը հայ նախարարական տների միջև պայքարի մասին. «Եւ զայն ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատարք անկանէին ընդ միմեանս, մեծաւ ոխութեամբ յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս, մարտ պատերազմի առանց իրաւանց: Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, և միա ևս նահապետն Որդունուոց տոհմին: Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ»⁷: Ազգամիջյան պատերազմ բորբոքող նախարարներն անարգեցին թագավորի պատվիրակին և արքունիքին այլ բան չէր մնում քան պատժել կենտրոնախույս իշխաններին: Արքունիքն այդ գործը հանձնարարեց սպարապետին: Ըստ պատմիչի՝ հրամայվեց «զՎաչէ որդի Արտաւազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան»⁸: Պատմիչի հաղորդումը ցույց է տալիս, որ միջֆեոդալական պայքարը սպառնալի չափերի էր հասել, այլապէս արքունիքը նրանց դեմ չէր ուղղարկի հայոց

¹ Ազգաբանագէտու, էջ 32: Ա. Մարտիրոսյան (ասում է, որ Խոսրովի մահից հետո, Տրդատը մի քանի տարի մնացել է երկրում մինչև Որմիզդ Արտաշիտի գահակալումը, այն է 261թ., իսկ խնամակալի դերը կատարում է Արտավազդ Մանուկունին: Տե՛ս Մարտիրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 153: III դարի երկրորդ կեսի դեպքերի ժամանակագրութիւնը (տե՛ս նույն տեղում, էջ 171):

² Մովսէս Խորենացի, էջ 224:

³ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 18:

⁴ Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 231:

⁵ Երեմյան Ա., Հայաստանի քաղաքական վիճակը Տրդատ Գ-ի հաջորդների ժամանակ, «Հայ ժողովրդի պատմութիւն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Ե., 1984, էջ 82:

⁶ Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հ. Բ, մաս Ա, Երկեր, Ե., 1978, էջ 145:

⁷ Փավստոս Բուզանդ, էջ 18: Պատմահայրը ևս անդրադառնում է այդ դեպքերին, սակայն առանց մանրամասների: Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 258:

⁸ Նույն տեղում:

գորաբանակի սպարապետին, այլ պատժիչ արշավանքը կիրազործեին արևմտյան, կամ հարավային բանակներից մեկի հրամանատարը՝ համապատասխանաբար Բագարատ Բագրատունին, կամ Մանաձիիր Ռշտունին¹: Վաչե Մամիկոնյանի կողմից պատժիչ գործողության զլուխ կանգնելը բացատրվում է մեկ այլ հանգամանքով ևս: Հավանական է, որ Որդունի ու Մանավազյան նախարարական տների միջև բախումը հրահրված լիներ արքունիքի կողմից: Այդ առումով Բ. Հարությունյանը նշում է. «Արքունիքը վարելով վերին աստիճանի խորամանկ ու ճկուն քաղաքականություն, ոչնչացնում էր երկրի կորևոր մայրուղիների վրա գտնվող նախարարությունները, և նրանց տիրույթները մեծ մասամբ հարքունիս գրավում կամ մասամբ հանձնվում եկեղեցուն»²: Վերջինս այդ ժամանակ դարձել էր Մեծ Հայքի խոշորագույն ավատատերերից մեկը: Հարցին բազմակողմանի անդրադարձած Հ. Մանանդյանը տեսակետ է հայտնում, որ հակամարտող նախարարները, լինելով կենտրոնական իշխանությունից գրեթե անկախ, մասնավոր պատերազմների վարումը համարել են իրենց օրինական իրավունքը³: Գուցե այս տեսակետն արտացոլում է զարգացած, կամ ուշ միջնադարում Եվրասիայում ձևավորված թագավորական իշխանության փոխհարաբերություններն իրենց վասալների հետ, սակայն ոչ մի կերպ չի կարող պատկերել վաղ միջնադարում Մեծ Հայքում ձևավորված ֆեոդալական հարաբերությունները, որտեղ գերագույն հողատերն Արշակունի թագավորն էր: Ինչպես Ս. Երեմյանն է նշում. «Երբ նախարարը մեղադրվում էր պետական դավաճանության կամ այլ հանցանքի մեջ, նախարարական տոհմը «անձեռ» էր արվում, այսինքն՝ բնաջնջվում էր, իսկ նրա «երկիրը» գրավվում էր «յարքունիս»»⁴:

Թագավորի հրամանը կատարում է, և ինչպես Փավստոս Բուզանդն է հաղորդում. «Ապա երթեալ հասանէր ի վերայ նոցա զօրավարն Վաչէ. հատկանէր վանէր զագզսն երկուսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորին և ոչ զմի և ինքն դառնայր առ արքայն Խոսրով թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետն Վրթանէս»⁵:

Այսպիսով, իրենց անխոհեմ երկպառակտչական գործունեության հետևանքով Որդունի և Մանավազյան հինավուրց տոհմերը բնաջնջվեցին ու հեռացան քաղաքական ասպարեզից:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ սպարապետ Վաչե Մամիկոնյանին դարձյալ ակտիվ գործունեության մեջ տեսնում ենք մասքթաց Սանեսան թագավորի Հայաստան կատարած արշավանքի ընթացքում⁶: Չխորանալով արշավանքի մանրամասների մեջ, քանի որ դրա վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ անդրադարձեր եղել են⁷, նշենք միայն, որ Տրդատ Գ-ի մահից հետո Փայտակարանի վերակացու նշանակված Սանատրուկ Արշակունին, օգտագործելով ստեղծված նպաստավոր վիճակը, իրեն թագավոր է հռչակում:

¹ Տրդատ Գ-ն Արտավազդ սպարապետի մահից հետո բանակի կառավարումը բաժանեց չորս մասերի՝ հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 262) ու տեղադրեց երկրի չորս կողմերում, որոնք պատերազմի ժամանակ միավորվում էին ընդհանուր հրամանատարի՝ հայոց սպարապետի հրամանի ներքո:

² Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Ե., 2016, էջ 52-53: Սկզբնական շրջանում, Մանավազյանների ռազմական հզորությունը կտրտելու համար, արքունիքը նախ բաժանեց նրանց տիրույթները՝ հինք դնելով Բզունյաց և Ապահունյաց իշխանական ընտանիքներին [տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի մաս Ա, (արևմտյան և հարավային աշխարհներ), Ե., 2001, էջ 234], իսկ հետագայում, հարմար առիթ գտնելով, ոչնչացրեց այդ նախարարական տները: Ըստ «Ձորանամակի»՝ Մանավազյանները մարտադաշտ էին դուրս բերում 1000, իսկ Այրարատ նահանգի Բասեն գավառին տիրապետող Որդունիները՝ 600 զինվոր: Տե՛ս Адоны Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 251, Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց» եւ «Ձաւրանամակ», Բազմավէպ, 2011, N 3-4, էջ 542-543:

³ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 147:

⁴ Երեմյան Ս., Վաղ-ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը Հայաստանում: Դասեր և դասակարգեր: Սոցիալական շերտավորումը, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 130:

⁵ Փավստոս Բուզանդ, էջ 18: Պատմահայրը նույնպես հպանցիկ անդրադառնում է Մանավազյան և Որդունի տների պատերազմին: Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 258:

⁶ Մեր նախորդ աշխատանքում, հայ-աղվանական հարաբերությունները քննարկելիս, հանգել էինք այն եզրակացության, որ հայոց թագավորի կողմից Փայտակարանում վերակացու նշանակված Սանատրուկը և մասքթաց թագավոր Սանեսանը նույն անձնավորություններն են: Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Ե., 2013, էջ 56-61: Սակայն հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք տարբեր գործիչներ են:

⁷ Հարցի վերաբերյալ ամփոփ ուսումնասիրությունը տե՛ս Հարությունյան Բ., Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, «ԼՀԳ», 1981, N 6, էջ 65-77:

Սակայն Խոսրով Կոտակն իր հետ ունենալով հայոց արևմտյան և հյուսիսային բանակները, հռոմեական ուժերի օգնությամբ գրավում է Փայտակարանը, իսկ Սանատրուկը փախչում է Պարսկաստան¹: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Սանատրուկի ընդվզումը խրախուսվում էր Շապուհ Բ-ի կողմից, և վերջինս ապաստան է տալիս նրան, օգնում դաշնակիցներ ձեռք բերելու հարցում: Խնդիրն այն է որ չէր լրացել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետը, և պարսիկները չէին կարող բացահայտ հանդես գալ Հռոմի հովանավորությունը վայելող Մեծ Հայքի թագավորության դեմ: Սանատրուկի դաշնակիցների թվի ավելացմանը գումարվեց այն հանգամանքը, որ Փայտակարան քաղաքի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ հայ-հռոմեական միացյալ զորաբանակը, Սանատրուկին պատժելու նպատակով, ասպատակեց Կուրի ձախափնյա² հատվածը, ավերեց մասքթաց երկրի հարավային շրջանները, որը և պատճառ դարձավ մասքթաց թագավոր Սանեսան Արշակունու թշնամության³: Խրախուսվելով պարսից արքայի կողմից՝ Սանեսանը ծրագրում էր ներխուժել Մեծ Հայք⁴: Նա, հավաքելով մի հսկայական բանակ, որի կազմում պատմիչը հիշատակում է «զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց, և Գղուարաց, Գուգարաց, Շչբաց և Ճղբաց Բաղասաճաց և Եգերսոււանացն, և այլոց խառնաղանճ բազմութեանց, անթիւ անբնական վաչկատուն զօրութեանց...»⁵: Այդ բանակը Աղվանքի տարածքով մոտեցավ Կուր գետին և, անցնելով այն, «տարածեցաւ էլից գերկիրն Հայոց աշխարհին»⁶: Հայոց հյուսիսային զորամիավորումը՝ բղեշխ Միհրանի գլխավորությամբ, փորձեց մինչ արքունի զորաբանակի գալուստը կանգնեցնել մասքութների անհամեմատ գերակշիռ ուժերին, սակայն պարտություն կրեց, իսկ բղեշխը սպանվեց⁷: Վաչկատուն հորդան շարժվեց Արարատյան դաշտ՝ գրավելով Վաղարշապատը և մեկ տարի տիրապետեց Հայաստանի կենտրոնական շրջաններում:

Խոսրով Կոտակը և իր զորապետները չկարողացան որևէ դիմադրություն կազմակերպել և ամրացան երկրի հեռավոր բերդերում: Հաջորդ տարի⁸ 334թ., Հայաստան վերադարձավ Վաչեն. «որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրավար ամենայն Հայոց մեծաց: Զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ գերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց»⁹: Յո. Մարկվարտի կարծիքով Վաչե Մամիկոնյանն արքունիքի կողմից ուղղարկվել է հռոմեացիներից օգնություն խնդրելու, և վերջիններս էլ այն տրամադրել են¹⁰: Սակայն Սանեսանի արշավանքն ամենայն մանրամասնությամբ նկարագրող Փավստոս Բուզանդի մոտ չկա նման տեղեկություն: Սպարապետը, ըստ երևույթին, արքունիքի հանձնարարությամբ գտնվում էր Հռոմեական կայսրությունում¹¹՝ ինչ-ինչ հարցեր համաձայնեցնելու համար: Վերադառնալով՝ Վաչե Մամիկոնյանը ժողովեց «գամենայն քաջս քաջս նախարարացն, և գունդ կազմէր բազում յոյժ»¹²: Այլ է Մովսես Խորենացու նկարագրությունը: Ինչպես իր աշխատանքի մյուս մա-

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 262-263:

² Փայտակարանում էին գտնվում աղվանից նախարարները և նրանք էլ Սանատրուկի հետ փախան Պարսկաստան: Տե՛ս նույն տեղում, էջ 263:

³ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 69:

⁴ Տե՛ս Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

⁵ Փավստոս Բուզանդ, էջ 28

⁶ Նույն տեղում: Ըստ Մովսես Խորենացու՝ Սանեսանի բանակի թիվը 20 հազար էր (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 266), իսկ ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 30 հազար: Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983, էջ 30:

⁷ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 266:

⁸ Մասքութների Հայաստան արշավանքի թվականի վերաբերյալ ուսումնասիրողները միակարծիք չեն: Գերմանացի հայագետ Յո. Մարկվարտը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը, նրանց հարձակման տարի են նշում 335 թ. (տե՛ս Markwart J., Die Entstehung der Armenische Bistumer Rom, 1932, p. 77; Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 148; Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 84: Բ. Հարությունյանը նշում է 331 կամ 332 թվականը: Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 77: Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններով եթե Խոսրով Կոտակի գահ բարձրանալը թվագրենք 330 թ., ապա, փաստորեն, նրա առաջին գործերից մեկը եղել է Փայտակարանի ասպատակության ճնշումը, իսկ քիչ անց էլ՝ Մանավազյանների և Որդունիների ոչնչացումը: 20 կամ 30 հազարանոց բանակ կազմակերպելու և Հայաստան արշավանք ձեռնարկելու համար Սանեսանից կպահանջվեր առնվազն մեկ տարի և, հավանաբար, արշավանքը պետք է թվագրել 332 թ.:

⁹ Փավստոս Բուզանդ, էջ 28:

¹⁰ Տե՛ս Markwart J., նշվ. աշխ., էջ 77:

¹¹ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 72:

¹² Փավստոս Բուզանդ, էջ 28:

սերում, այնպես էլ Խոսրով թագավորի կառավարման շրջանը նկարագրելիս, նա մոռացության է տալիս Վաչե Մամիկոնյանին, նշելով. «Որոց պատահեալ պատերազմաւ արևելեայ և արևմտեայ գօրուն Հայոց՝ հանդերձ գօրապետօքն Բագարատաւ ասպետի և Վահանաւ նահապետի Ամատունեաց»¹: Այս առումով Բ. Հարությունյանը նշում է, որ «Կարծես թե պատմահայրը փորձում է այնպես անել, որ Բագարատ Բագրատունու անունը չմթագնվի ամենայն հայոց հրամանատարի՝ Վաչե Մամիկոնյանի հիշատակությամբ»²:

Առաջին խոշոր բախումը մասքութների հետ Ցլու գլուխ կոչվող լեռան շրջակայքում էր³, որտեղ բանակել էին մասքութների հիմնական բանակից անջատված ավարառու զորամիավորումները: Լուսադեմին հարձակվելով մասքութների վրա՝ հայկական բանակը կոտրեց նրանց դիմադրությունը. «սուր հանին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և դարձուցանէր զբազմութիւն գերեացն»⁴: Հաջողությամբ սկսված հակահարձակումը պետք էր զարգացնել, և հայոց սպարապետն իր հաջորդ քայլով որոշեց ջախջախել Սանեսանի գլխավոր ուժերին, որոնք բանակնել էին մայրաքաղաք Վաղարշապատում: Հայոց բանակի հարձակումը ստիպում է մասքութներին շրջապատման մեջ չընկնելու համար դուրս գալ մայրաքաղաքից և նահանջել: Դրսևորելով հմուտ ռազմավարի հատկանիշներ՝ Հայոց զորահրամանատարը ստիպեց Սանեսանին ձակատամարտ տալ նրա համար ոչ բարենպաստ տեղանքում՝ Օշականի Առապար վայրում: Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, «և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ : Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին ըՌըշտունիք, և Վահան նահապետն Ամատունեաց տոհմին, և Վարազ կամինական, հասանէին հարկանէին ատակէին զօրսն Ալանացն և Մասքթացն և Հոնացն և զայլոց ազգացն, լնուին զդաշտն առապարացն առ հասարակ դիակամք մեռելոց. մինչ զի իբրև զգետ յարուցեալ երթայի արիւնն անհնարին, և ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց»⁵: Հաղթանակը լիակատար էր: Առապարի ձակատամարտում սպանվեց նաև Սանեսան թագավորը⁶:

ձակատամարտից հետո Ծովքից վերադարձած Խոսրով Կոտակը բնական է, որ պետք է պարզևատրեր մասքութներին հաղթող զորապետներին՝ առաջին հերթին հայոց բանակի սպարապետ Վաչե Մամիկոնյանին: Ըստ Փավստոս Բուզանդի՝ «Եւ ետ Վաչէի զօրավարի զականս Ջանջանակին և զՋրաբաշխիս և զՑլու գլուխ, ամենայն գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարզևս»⁷: Վերը նշված կալվածքները երրորդն էին՝ Տարոնից և Տայքից հետո, որոնք Մամիկոնյանները ձեռք բերեցին Հայաստանում:

Եթե հետևելու լինենք Փավստոս Բուզանդի հիշատակած դեպքերի ժամանակագրությունը, ապա մասքութներին հաղթելուց և Հայաստանից դուրս շարտելուց հետո Վաչե Մամիկոնյանը զբաղված էր Գառնիից մինչև Մեծամոր ձգվող արքայական անտառներ հիմնելով⁸:

Սակայն Հայաստանում խաղաղությունը երկար չպահպանվեց: Տեսնելով, որ ներքին երկպառակությունները ու Սանեսան Արշակունու բազմազգ բանակի արշավանքը Մեծ Հայք չունեցավ սպասված արդյունքը՝ Շապուհ Բ-ն, այլևս չսպասելով Մծբինի պայմանագրի ժամկետի ավարտին, 335 թ.⁹ գործողություններ սկսեց թե՛ կայսրության և թե՛ Հայաստանի դեմ: Պարսից արշավանքին զուգահեռ երկրում աշխուժանում են կենտրոնախույս ձգտումները:

¹ Մովսես Խորենացի, էջ 266:

² Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 73:

³ Ցլու գլուխ լեռը գտնվում է Աշտարակ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք, Օշական գյուղի հարավարևմտյան կողմում: Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Ե., 2001, էջ 159:

⁴ Փավստոս Բուզանդ, էջ 30:

⁵ Նույն տեղում:

⁶ Մեկ տարի գտնվելով Մեծ Հայքում և լինելով Արշակունյաց տոհմից (տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 28, 30)՝ Սանեսանը, հավանաբար, իրեն հռչակել էր Մեծ Հայքի թագավոր և տիրել երկրի կենտրոնական ու արևելյան հատվածին:

⁷ Փավստոս Բուզանդ, էջ 32: Այդ գավառների տեղադրության մասին տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.4, Ե., 1998, էջ 387, 416; Մանուշարյան Ա., Արագածոտնի նախարարական տները IV-VII դարերում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2017, N 3, էջ 36, ծան. 4: Վարդանյան Ա., Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, «Հայագիտական հարցեր», 2019, N 1, էջ 24:

⁸ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 32:

⁹ Տե՛ս Markwart J., նշվ. աշխ., էջ 96: Մյուս ուսումնասիրողները համարում են, որ պարսկական հարձակումը սկսվել է 336/337 թ.: Տե՛ս Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 84, ծան. 16:

Դրա հետևանքն էր Բզունյաց Դատաբեն իշխանի դավաճանությունը, որին Խոսրով Կոտակը հրամայել էր 140 հազարանոց զորաբանակով կասեցնել թշնամու հարձակումը¹՝ փակելով Չորա պահակ լեռնանցքը: Բզունյաց իշխանը, համաձայնության գալով պարսիկների հետ, հայոց զորքը մատնեց կորստյան: Այս բախտորոշ պահին, երբ վճռվում էր թե՛ Արշակունյաց թագավորության, և թե՛ քրիստոնեական եկեղեցու բախտը, 30 հազարանոց զորաբանակով թշնամուն ընդառաջ է գնում սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Ճակատամարտը տեղի է ունենում «ափն ծովուն Բզունեաց, յԱռեստն ասանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերաց գետակին»²: Հայոց բանակը լիակատար հաղթանակ է տանում թվով իրեն գերակշռող թշնամու նկատմամբ և պատմիչի հաղորդմամբ «...թափէին ասար բազում, և զփիղսն և զամենայն ոյժ զօրութեան նոցա»³: Նշենք, որ ձերբակալվեց և մահապատժի ենթարկվեց Բզունյաց նահապետը. «և զտուն նոցա յարքունիս կալան»⁴:

Առեստի ճակատամարտից հետո ևս չէին դադարում պարսկական մանր ու մեծ հարձակումները, որոնց դիմագրավում էր Արշակունյաց գահի հենարանը հանդիսացող Վաչե Մամիկոնյանը և նրա զինակից Վահան Ամատունին, որոնց Խոսրով Կոտակը պատմիչի խոսքերով վստահում էր բոլորից առավել⁵:

337 թ. Կոստանդիանոս Մեծի մահը և կայսերական արքունիքում սկսված գահակալական պայքարն ուժեղացնում է Շապուհ Բ-ի նվաճողական ծգտումները: 338 թ. պարսկական զորաբանակաները պաշարում են Միջագետքում ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող Մծբին քաղաքը և ներխուժում Հայաստան: Դեպքերը մանրամասնորեն նկարագրող Փավստոս Բուզանդը նշում է. «Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչե զազատախումբ բանակ նախարարակոյտ զօրայն: Եւ ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմացն, և բազում ծախ մեծամեծ ասազանույն կոտորելոցն: Ականէր ի պատերազմին յայնմիչ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. և լինէր ամենայն աշխարհին սուզ անհնարին, զի բազում անգամ էր տէրն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա»⁶: Ճակատամարտում, որի վայրը մեզ անհայտ է, հայկական կողմը ծանր պարտություն է կրել՝ տալով մեծաթիվ կորուստներ⁷: Սակայն, միանշանակ է, որ պարսկական կողմն էլ ունեցել է լուրջ կորուստներ, քանի որ չի կարողացել շարունակել արշավանքը և գրավելով մայրաքաղաքը՝ կործանել Արշակունիների գահը:

Այնուամենայնիվ, ճակատամարտում հայկական կողմի մեծագույն կորուստը եղել է ժերունի սպարապետի մահը: Հայոց կաթողիկոս Վրթանեսը պարսիկների դեմ մղված մեծ ու փոքր ճակատամարտերը հայատարարեց սրբազան, իսկ զոհվածներին՝ նահատակներ, և կանոն դրեց ամեն տարի. «յիշել զսոսա առ սուրբ սեղանն ասրուծոյ ի ժամ պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զկնի նոցա գնոցայն. և մնացելոցն յանցելոցն զութ և խնամ կալցին»⁸: Քանի որ սպարապետական մականը պատկանում էր Մամիկոնյան տոհմին⁹, և հորից անցնում էր որդուն, Խոսրով Կոտակը Վաչե Մամիկոնյանի մանկահասակ որդուն. «ի հայրենի բարձր գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ: Առաջի թագաւորին զհօրն պատին ի գլուխն դնէին, և զսպարապետութեան նորուն տեղի զի կարի որդի վաստակաւորի էր, և ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հօժկու, զի ի մեծ պատերազմին մեռան»¹⁰: Մինչ Արտավազդ Մամիկոնյանի չափահաս դառնալը, թագավորի հրամանով մանուկ սպարապետին խնամակալներ կարգեցին «Արշաւրայ

¹ Փավստոս Բուզանդ, էջ 32:

² Նույն տեղում, էջ 34:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում: Բզունյաց գավառում կալվածքներ ուներ նաև եկեղեցին: Տե՛ս նույն տեղում, էջ 180: Սակայն 439 թ. Սահակ Պարթևի կտակով դրանք անցան Մամիկոնյաններին: Գավառի՝ արքունիքին պատկանող հատվածը, հավանաբար, անձեռնմխելի մնաց մինչև 428 թ.: Իսկ թագավորության անկումից հետո, հաշվի առնելով նաև կաթողիկոսի կտակը, գավառի մեծագույն մասին տեր դարձան Մամիկոնյանները:

⁵ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 34:

⁶ Նույն տեղում, էջ 44:

⁷ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 155:

⁸ Փավստոս Բուզանդ, էջ 46: Տե՛ս նաև Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց՝ Ռ. Մաթևոսյանը, Էջմիածին, 1999, էջ 70:

⁹ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966, էջ 435:

¹⁰ Փավստոս Բուզանդ, էջ 46:

Կամսարականի՝ իշխանին Շիրակաց և Արշարունեաց գաւառին, և Անդովկաց իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսացք էին տանն Մամիկոնեան տոհմին»¹:

Փաստորեն, Մամիկոնյան տոհմի առաջին սպարապետը եղել է Արտավազդ Մամիկոնյանը, որն իր գործունեությունը ծավալել է III դ. վերջին և IV դ. սկզբներին: Արտավազդի ջանքերի շնորհիվ ոչ միայն փրկվեց Արշակունյաց արքայատոհմը, այլ նաև հայկական պետականությունը: Արտավազդ Մամիկոնյանից հետո սպարապետությունը Մամիկոնյան իշխանական ընտանիքում դարձավ ժառանգական: Վերջինիս հաջորդեց որդին՝ Վաչեն, որն իր գործունեության շնորհիվ թագավորի ու կաթողիկոսի հետ միասին կարողացավ դիմագրավել Հայաստանին սպառնացող բոլոր մարտահրավերներին: Վաչե Մամիկոնյանի զորավարական շնորհի արդյունքում երկար ժամանակ հայկական բանակը հաղթող դուրս եկավ թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիների դեմ:

Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА. В раннем средневековье политическая история Армении была связана с деятельностью дома Мамиконянов. Один из первых Мамиконянов, который своей деятельностью выдвинулся, был Артавазд Мамиконян который в труде Мовсеса Хоренаци, превратился в Мандакуни. Спарпет Артавазд Мамиконян, спас наследника престола Трдата, в результате чего в дальнейшем в Великой Армении снова восстановилась династия Аршакидов. Во время спарпетства Ваче - сына Артавазда, Армения не только должна была противостоять внешней опасности, но и внутри страны должна была сдерживать межфеодалную борьбу. Спарпет Ваче Мамиконян, не только несколько раз вышел победителем в борьбе с внешним врагом, но и сумел подавлять внутренние распри.

Ключевые слова: Трдат III, Артавазд Мамиконян, Мовсес Хоренаци, Хосров Котак, Ваче Мамиконян, Павстос Бузанд, Санесан, восстание, персы.

Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK. The political history of early medieval Armenia is connected with the activity of Mamikonyans house. One of the first of Mamikonyans, who stood out, was Artavazd Mamikonyan, he saved legatee of Trdat. As a result, the Kingdom Arshakuni was again stored in the Greater Armenia. When Vache, who was the son of Artavazd, was the military leader, Armenia not only had to withstand the foreign danger, but also had to restrain the interfeudal struggle inside the country. Military leader Vache Mamikonyan not only the defeated foreign enemies of the country, but also suppressed the inner schisms.

Key words: Trdat III, Artavazd Mamikonyan, Movses Khorenatsi, Khosrov Kotak, Vache Mamikonyan, Pavstos Buzand, Sanesan, rebellion, Persians.

¹ Նույն տեղում: Մովսես Խորենացին ընդհանրապես չի հիշատակում պարսիկների դեմ մղված ձակատամարտը և Վաչե Մամիկոնյանի հերոսական մահը հետևաբար չի հիշատակում նաև Անդոկ Սյունյաց իշխանի որպես խնամակալ, նշելով Խոսրով Կոտակի մահը . «յանձն առնէ զաշխարհս Արշարիս Կամսարականի, որպես գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի» (տե՛ս Մովսես Խորենացի էջ 268): Ստ.Մալխասյանցը մինչև Տիրան Արշակունու թագավորները, երկրի կառավարումը Կամսարականներին հանձնելը բացատրում է հետևյալ հանգամանքով. «Կամսարականները Պահլավական ծագում ունեին, սերված լինելով Կարենյան Պահլավից: Հայ Արշակունիները, ինչպես հայտնի է, Արշակունիների մեծ տոհմում երկրորդ տեղն էին գրավում Պահլավներից հետո»: Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ.Մալխասյանցի, Ե., 1968, էջ 359, ծան.157: